ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____/Գայանե Այվազյան

« 01 » 09 2022թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի հ.108 միջնակարգ դպրոց

II բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Գեորգիյան Նելլա Աշոտի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուս.տարում II բ դասարանում սովորում է 30 աշակերտ՝ 13 աղջիկ, 17 տղա: Սովորողների առողջական վիճակը նորմալ է:Կան լավ, միջին և թույլ ունակություններով սովորողներ: Դժվար դաստիարակվող աշակերտներ չկան: Համերաշխ են,աշխատասեր,կարգապահ: Բոլոր սովորողների ընտանեկան վիճակը բավարար է: Աշակերտական կոլեկտիվը ձևավորված է : Յուրաքանչյուր սովորող ձգտում է դրսևորել անհատական և արժանավայել պահվածք: Սիրով մասնակցում են հանրօգուտ աշխատանքներին:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Բարձրացնել սովորողների կարգապահությունը՝ օրվա ռեժիմ, վարքի կանոններ, հասարակական հանձնարարություններ

բ/ Առաջադիմության բարձրացում, միմյանց նկատմամբ փոխօգնության կազմակերպում

գ/ Սիրել ու պահպանել մայրենի լեզուն, դաստիարակել հայեցի, կարևորել ազգային ավանդույթներն ու արժեքները

դ/ Կազմակերպել նպատակային էքսկուրսիաներ,շրջագայություններ

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը դպրոցական տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Պետք է սովորողների մեջ սերմանել բարոյական արժեքներ: Հոգևոր դաստիարակությունը հույս, ուժ, բարություն, ձգտում փոխանցելու միջոց է:

3.2 - Գեղագիտական դաստիարակություն

Գեղարվեստական բարձր ճաշակի և կուլտուրական ունակությունների ձևավորում:Օգնել ճիշտ ընկալել գեղեցիկը արվեստում,աշխատանքում, բնության մեջ և ամենօրյա կյանքում: Գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացմանը նպաստելու համար կազմակերպել նպատա-կային էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, ցուցահանդեսներ:

3.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Դաստիարակել հայրենասիրական զգացում , զարգացնել հետաքրքրություն մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ: Սերմանել արժանապատվություն և անսահման սեր դեպի հայրենիքը, պաշտպանել թշնամիներից: Ճանաչել հայրենիքի նվիրյալներին և շարունակել նրանց գործը:

3.4 - Ֆիզիկական դաստիարակություն

Ճիշտ կազմակերպել ֆիզիկական դաստիարակությունը և ապահովել նրանց ֆիզիկական առողջ աճն ու զարգացումը: Պահպանել անձնական հիգիենայի կանոնները, կոփել օրգանիզմը: Զարգացնել հմտություններ քայլքում, վազքում: Կազմակերպել զարգացնող խաղեր, զվարճանքներ, ուսուցողական փոքրիկ արշավներ:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն

Սովորողներին ընդգրկել հանրօգուտ գործունեության մեջ, վարժեցնել աշխատել համատեղ կոլեկտիվ կերպով: Սովորողների մեջ դաստիարակել պատրաստակամություն, հարգանք մեծերի աշխատանքի նկատմամբ: Սիրել աշխատանքը: Զարգացնել խնայողության զգացումը:

3.6 - Բնապահպանական դաստիարակություն

Ծանոթացնել շրջակա միջավայրին և բնությանը, նրան սպառնացող վտանգներին: Հետաքրքրություն առաջացնել բնության նկատմամբ: Օգնել սովորողներին դառնալ շրջակա միջավայրի պահպանողն ու բարելավողը: Սիրել բնությունը, հոգ տանել կենդանիների և թռչունների մասին: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի հայրենի բնության գիրկը:

3.7 - Դպրոց-ընտանիք կապը

Մշտական կապ հաստատել ընտանիքների հետ: Կազմակերպել կոլեկտիվ և անհատական ժողովներ, զեկույցներ: Երբեմն այցելել սովորողներին , ծանոթանալ ընտանեկան պայմաններին, նրանց շրջապատին, ընկերներին: Ծնողներին ծանոթացնել դպրոցի պահանջներին, նրանց ներգրավել ուսուցման և դաստիարակության գործին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Գիտելիքի օր։Դասագրքերի բաշխում։Ծանոթացում օրվա ռեժիմին։	01.09 - 02.09.2022	Դասվար, աշակերտներ
II	Զրույց կարգապահության մասին։	05.09 - 09.09.2022	Դասվար, աշակերտներ
III	Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները։Մանկական ճանապարհատրանսպորտային վնասվածքներ։	12.09 - 16.09.2022	Դասվար, աշակերտներ
IV	Սեպտեմբերի 21-ը Անկախության օր	19.09 – 23.09.2022	Դասվար, աշակերտներ
V	Հետիոտնի տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով	26.09 – 30.09.2022	Դասվար, աշակերտներ
VI	Տոնդ շնորհավոր,ուսուցի՛չ	03.10 – 7.10. 2022	Դասվար, աշակերտներ
VII	Էրեբունի – Երևան 2804	10.10 – 14.10.2022	Դասվար, աշակերտներ
VIII	Ճանաչենք մեր հայրենիքը	17.10 – 21.10. 2022	Դասվար, աշակերտներ
IX	Փողոցների և ճանապարհների տարրերը։ Ճանապարհային գծանշումը	31.10 – 4. 11. 2022	Դասվար, աշակերտներ
X	Իմ ծննդավայրը	7. 11 -11.11. 2022	Դասվար, աշակերտներ
XI	Իմ առօրյան։Անձնական հիգիենա	14.11 – 18. 11.2022	Դասվար, աշակերտներ
XII	Իմ աշակերտական սեղանի նոր ընկերը	21. 11 – 25. 11. 2022	Դասվար, աշակերտներ
XIII	Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի	28.11 – 2.12.2022	Դասվար, աշակերտներ
XIV	Բնական աղետներ։Ինչպես պաշտպանվել բնական աղետների ժամանակ	5. 12 - 9.12.2022	Դասվար, աշակերտներ
XV	Լուսացույցի և կարգավորողի ազդանշանները	12.12 – 16.12.2022	Դասվար, աշակերտներ
XVI	Ուրախ դիմավորենք Ամանորը	19.12-23.12.2022	Դասվար, աշակերտներ
XVII	Իմ հզոր բանակ	23.01-27.01.2023	Դասվար, աշակերտներ
XVIII	Օրվա ռեժիմը և առողջությունը	30.01-3.02.2022	Դասվար, աշակերտներ
XIX	Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները	6.02-10.02.2023	Դասվար, աշակերտներ
XX	Տեառնընդառաջ	13.02-17.02.2023	Դասվար, աշակերտներ
XXI	Մեր մայրենին։ Գրքերի աշխարհում	20.02-24.02.2023	Դասվար, աշակերտներ
XXII	Իրավունք և պարտականություն	27.02-3.03.2023	Դասվար, աշակերտներ
XXIII	Մարտի 8-ը կանանց միջազգային օրն է	6.03-10.03.2023	Դասվար, աշակերտներ
XXIV	Խաչմերուկները և դրանց տեսակները։Տրանսպորտային միջոցների վարորդների ազդանշանները	13.03-17.03.2023	Դասվար, աշակերտներ
XXV	Գարունը մեր բակում	20.03-24.03.2023	Դասվար, աշակերտներ

XXVI	Գեղեցկության և մայրության տոն	3.04-7.04.2023	Դասվար, աշակերտներ
XXVII	Ճանապարհային նշաններ	10.04-14.04.2023	Դասվար, աշակերտներ
XXVIII	Օգնի՛ր ընկերոջդ մեծահոգաբար	17.04-21.04.2023	Դասվար, աշակերտներ
XXIX	Ուղևորների պարտականությունները	25.04-28.04.2023	Դասվար, աշակերտներ
XXX	Գարնանային տոներ	2.05-5.05.2023	Դասվար, աշակերտներ
XXXI	Զրույց՝ <<Մեր քաջ հերոսները: Մենք ուզում ենք խաղաղություն>>	8.05-12.05.2023	Դասվար, աշակերտներ
XXXII	Տրանսպորտային միջոցներից իջնելիս փողոցն անցնելու կանոնները	15.05-19.05.2023	Դասվար, աշակերտներ
XXXIII	Երթևեկության կանոնների գործնական պարապմունքներ և խաղեր հատուկ գծանշված հրապարակում կամ փողոցում	22.05-26.05.2023	Դասվար, աշակերտներ
XXXIV			

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը
1.09.2022թ.	Գիտելիքի օր։ Առաջին զանգի տոնակատարություն	Դպրոց
20.09.2022 թ.	Անկախության օր	Դպրոց
5.09.2022 թ.	Տոնդ շնորհավոր,ուսուցի՛չ	Դպրոց
23.12.2022 թ.	Ամանորյա տոն (միջոցառում)	Դպրոց
27.01.2023 թ.	Բանակի օր	Դպրոց
14.02.2023 թ.	Տեառնընդառաջ	Դպրոց
20.02.2023 թ.	Մայրենի լեզվի տոն	Դպրոց
07.03.2023 թ.	Մարտի 8	Դպրոց
24.03.2023 թ.	Շաբաթօրյակ	Դպրոց
09.04.2023 թ.	Սուրբ Զատիկ	Դպրոց
10.05.2023 թ.	Հայրենի՛ք, ես մի զարկն եմ քո բազկի	Դպրոց

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	Միջոցառման բովանդակությունը	Ծանոթություն
30.09.2022թ.	<<Անվտանգ երթևեկության կանոններ>> տեսաֆիլմի դիտում	
15.10.2022թ.	Էքսկուրսիա՝<<Իմ ծննդավայրը>>	
05.11.2022թ.	Այցելություն <<Կոնստանտին Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոն>>	
19.11.2022թ.	Միջոցառում՝<<Մրգահանդես>>	
21.12.2022թ.	Այցելություն <<Հակոբ Պարոյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն>>	
2.12.2022թ.	Մասնակցություն դպրոցի փորձնական տարհանման աշխատանքներին	
23.12.2022թ.	Ամանորյա ուրախ ցերեկույթ-հանդես	
17.02.2023թ.	Այցելություն << Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան>>	
24.03.2023թ.	Միջոցառում՝<< Գարնանամուտ>>	
02.04.2023թ.	Ծաղկազարդ՝ այցելություն եկեղեցի, մատուռ	
26.04.2023թ.	Մեծ Եղեռն՝այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր	
12.05.2023թ.	Միջոցառում՝<<Հաղթանակների մայիս>>	

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Դասալսման ամիսը	Առարկան,դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
Սեպտեմբեր	Ֆիզկուլտուրա՝ Արմինե Հովհաննիսյան	<<Հիգիենայի կանոնների պահպանումը ֆիզիկական կուլտուրայի դասի ժամանակ>>	Հիգիենայի կանոնների ստուգում և պահպանում
Հոկտեմբեր	Կերպարվեստ՝ Աննա Մալաքյան	<< Աշնան մրգեր>>	Ճիշտ կառուցել, գունավորել թվարկած մրգերը
Հոկտեմբեր	Ռուսաց լեզու՝ Ազնիվ Օսեյան	<<Школа>>	Նկարների բովանդակությունների վերարտադրում: Ռուսերեն բառապաշարի հարստացում
Հոկտեմբեր	Երաժշտություն՝ Լուսինե Թովմասյան	<<Պարի տեսակները>> Ունկնդրում՝ Արամ Խաչատրյան՝ <<Աղջիկների պար>>	Սովորողներին ներկայացնել պարեր, որոնք տարբեր են իրենց բնույթով, ցույց տալ այդ տարբերությունը
Նոյեմբեր	Ֆիզկուլտուրա՝ Արմինե Հովհաննիսյան	<<Դպրոցական աշակերտների օրվա ռեժիմը>>	Աշակերտների օրվա ռեժիմի ճիշտ և ժամանակին օգտագործումը
Նոյեմբեր	Երաժշտություն՝ Լուսինե Թովմասյան	<<Երգ>> Կոմիտաս Ունկնդրում՝ Կոմիտաս՝ <<Հայրապետական օրհներգ>> Երգեցողություն՝ Կոմիտս<< Կաքավի երգը>>, <<Լորիկ>>	Սովորողներին ծանոթացնել երգեցողության, ունկնդրման միջոցով Կոմիտասի ստեղծագործություններին:Տալ անհրաժեշտ տեղեկատվություն նրա կյանքի վերաբերյալ
Դեկտեմբեր	Ռուսաց լեզու՝ Ազնիվ Օսեյան	<<Пп>>	Пп- հնչյուն - տառերի ուսուցման յուրացում
Դեկտեմբեր	Կերպարվեստ՝ Աննա Մալաքյան	<<Ոսկե ձկնիկի հեքիաթը>>	Հեքիաթի հերոսների տարբերակում (բարի, չար), հեքիաթի ձևավորում
Փետրվար	Ռուսաց լեզու՝ Ազնիվ Օսեյան	<<Зз>>	Зз – հնչյուն - տառերի ուսուցման յուրացում
Փետրվար	Կերպարվեստ՝ Աննա Մալաքյան	<<Հեքիաթի ձևավորում>>	Ընթերցած հեքիաթի որևէ հատվածի ձևավորում
Մարտ	Շախմատ՝ Կարեն Պողոսյան	<<Պաշտպանություն>>	Ծանոթանալ պաշտպանության ձևերին
Մարտ	Երաժշտություն՝ Լուսինե Թովմասյան	<<Քայլերգը օպերայում, բալետում>>	Սովորողներին ցույց տալ ունկնդրած քայլերգերի նմանությունները և տարբերությունները
Մարտ	Ֆիզկուլտուրա՝ Արմինե Հովհաննիսյան	<<Փոքր գնդակով նետում նշանակետին>>	Նշանակետին փոքր գնդակով նետելու ունակությունների ձևավորում

Մայիս	Կերպարվեստ՝ Աննա Մալաքյան	<<Գարնանային ծաղիկներ>>	Հիշել և տարբերել գարնանային ծաղիկների անվանումները, գույները
Մայիս	Ռուսաց լեզու՝ Ազնիվ Օսեյան	<<Хрюшка обижается>>	Ստուգել կարդալու բառապաշարը և տեխնիկան

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	Դասաժամը	Շաբաթվա օրը	Դասաժամը
Ուրբաթ	5-րդ	Ուրբաթ	5-րդ

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը	Ուսուցչի անուն, ազգանուն	Ծանոթություն
09.09.2022թ.	Համադպրոցական ծնողական ժողով	Ծանոթացում ուսումնական տարվա աշխատանքներին, օրվա ռեժիմին, դպրոցի կարգ ու կանոնին	Տնօրեն՝ Գայանե Այվազյան	
07.10.2022թ.	Դպրոցը, 2-րդ դասարանցիները և ընտանիքը	Ծնողի պարտականությունները դասապատրաստմանը	Նելլա Գեորգիյան	
25.11.2022թ.	Ծնողների ներգրավումը դաստիարակչական աշխատանքներում	Սովորողների կրթության և դաստիարակության գործում ներգրավել ծնողներին՝ծնող-ուսուցող, ծնող- խորհրդատու	Նելլա Գեորգիյան	
10.02.2023թ.	Ծնողի հեղինակությունը ընտանիքում	Կարևորել ծնողի հեղինակությունը ընտանիքում	Նելլա Գեորգիյան	
17.03.2023թ.	Երեխան, խելացի հեռախոսը և հեռուստացույցը	Ի՞նչ դեր ունեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները սովորողների կյանքում։Դրական և բացասական կողմերը։	Նելլա Գեորգիյան	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
09.09.2022թ.	Եկեք ծանոթանանք՝ծնող,դասարանի ղեկավար,առարկայի ուսուցիչ: Ծնողկոմիտեի ընտրություն	Համագործակցություն դասվանդող ուսուցիչների հետ։ Ընտրել ծնողկոմիտե,խորհրդի կազմ։	
21.10.2022թ.	Երկու ամսվա կատարած աշխատանքների արդյունքները,կազմակերպչական հարցեր	Ամփոփել սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին կատարված աշխատանքները։ Տեղեկատվություն հաղորդել աշակերտների վարքի և առաջադիմության մասին։	
23.12.2022թ.	I կիսամյակի արդյունքները, II կիսամյակի անելիքները	Ամփոփել I կիսամյակի արդյունքները, ծանոթանալ II կիսամյակի անելիքներին։	

24.02.2023թ.	Ընդլայնենք երեխաների հետաքրքրությունների շրջանակը	Զրույց՝ ինչպես և ինչ մեթոդներով երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնել բնության նկատմամբ։	
28.04.2023թ.	Կրթության նշանակությունը մարդու կյանքում	Կրթության դերը մարդու աշխարհայացքի ձևավորման գործում	
26.05.2023թ.	Ուսումնական տարվա աշխատանքների ամփոփում	Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում, շնորհակալագրերի հանձնում	

Դասվար՝ Նելլա Գեորգիյան